

## ՄՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

*Բանայի բառեր – հանելուկ, հանելուկագիր, միջնադարյան հանելուկագրություն, ժողովրդական-բանահյուսական հանելուկներ, անհատական-գրավոր հանելուկներ, աշխարհիկ հանելուկներ, ուսուցողական հանելուկներ, Նոր Ջուղայի վաճառականներ*

XVII-XVIII դարերի հայ նշանավոր վաճառական, բանաստեղծ, հանելուկագիր, երաժիշտ և նկարիչ Ստեփանոս Դաշտեցին թողել է բավականին հարուստ գրական ժառանգություն: Նրա կենսագրական սակավ տվյալներին տեղեկանում ենք իր իսկ տաղերից: Ըստ դրանց՝ նրա ծննդավայրը Նոր Ջուղան է, որտեղ ծնողները տեղափոխվել են Գողթն գավառի Հին Ջուղայի Դաշտ գյուղից: Թերևս այստեղից է նրա Դաշտեցի մականունը:

Նրա բազմաժանր ստեղծագործություններում հանելուկները փոքր տեղ են զբաղեցնում, սակայն նշանակալից են գրականության պատմության տեսանկյունից: Գրավոր հանելուկների ժանրը նոր որակի հասցրած Ներսես Շնորհալուց հետո Ստեփանոս Դաշտեցին այլ երանգով շարունակեց հանելուկագրության դասական ավանդները՝ որոշակի ձև ու բովանդակություն հաղորդելով ժանրին: Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել նաև նրա հանելուկները հայ հանելուկագրության համատեքստում:

Հայ հանելուկագրության պատմության մեջ հանելուկները բաժանվում են երկու մեծ՝ ժողովրդական-բանահյուսական և անհատական-գրավոր խմբերի: Եթե ժողովրդական հանելուկները սկիզբ են առնում շատ վաղ ժամանակներից, ապա անհատական հանելուկների ծագումը համարվում է V դարը, երբ սկզբնավորվում է հայ դպրությունը:

Եթե հայ ժողովրդական հանելուկները գրի չեն առնվել մինչև XIX-XX դարերը, ապա անհատական հանելուկները գրավոր արձանագրել են հեղինակները, ուստի դրանց ժողովածուներն են ձեռագրերը, բացառիկ դեպքերում՝ տպագիր սկզբնաղբյուրները<sup>1</sup>:

Ինչպես ընդարձակ է ու տարածված ժանրի ժամանակագրությունը, այնպես էլ բազմազան ու տարատեսակ են դրա անվանումները, որոնք երբեմն

---

<sup>1</sup> Հայ ժողովրդական հանելուկագիտության գործում մեծ ավադ ունի Ս. Հարությունյանը (տե՛ս **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Երևան, 1960, *նույնի*՝ Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965): Հայ միջնադարյան հանելուկների մասին մեծարժեք աշխատություն է հրատարակել Ա. Մնացականյանը, որտեղ անդրադառնալով առանձին հեղինակների և նրանց ժամանակին՝ վեր է հանել գաղափարական և գեղարվեստական կարևորագույն խնդիրները (տե՛ս **Մնացականյան Ա. Շ.**, Հայ միջնադարյան հանելուկներ (V-XVIII դդ.), Երևան, 1980):

ընդհանուր ստեղծագործությունների անվամբ են հանդես եկել. օրինակ՝ *առակ, առասպել, առեղծուածք, բէյթ, բունկն, անառկ և ասացվածք, խրթնաբանություն, հարցմունք և պատասխանիք* և այլն, իսկ երբեմն գրական և մասնավոր ծագում ունեցող անվանումներով՝ *բան ծածուկ, գտանելիկ, հանելուկ դիմակք, նսեմաբանություն, ոտանավոր հանելուկ, սահման իրին, վասն գոյի*: Իսկ ավանդական, հնամենի անվանումներում հանդիպում ենք *հանանելիք (հանհանելիք կամ հանհանք) և հանք* տարբերակների:

Գրավոր հանելուկների անվանումների բազմազանությունը կապված է դրանց հեղինակի հետապնդած նպատակի հետ: Այսպես օրինակ՝ Դավթակ Քերթողի համար այբուբենի և գրքի մասին ստեղծված հանելուկները «Իմաստասիրություն» էին, Անանունի համար՝ «Նսեմաբանություն», ապա Ներսես Շնորհալու համար՝ «Սահման իրին», այն է՝ առարկաների հատկանիշների բնութագրություն<sup>1</sup>:

Միջնադարյան Հայաստանում հանելուկների բազմազան անվանումներն աստիճանաբար իրենց տեղը զիջել են վերոնշյալ երրորդ խմբի անվանումներին, առավելապես՝ «հանելուկին»: Ժանրի էությունն ու կիրառման նպատակը քննարկելու համար հետաքրքրական են անվան ստուգաբանական դիտարկումները. ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը, օրինակ, «հանելուկ» բառը նույնացնում է «առեղծված» (առեղծուած) բառի հետ, այն է՝ «մի առարկայի նկարագրությւն մութ՝ այլաբանական խօսքերով, որոնց ամբողջությւնից կարելի է հասկանալ առարկայի ինչությունը. հանելուկ, հանք»<sup>2</sup>:

Ըստ մեկ այլ դիտարկման՝ «հանելուկ» բառի հիմքում «հանել» բայն է<sup>3</sup>, ինչը ենթադրում է հանել, հայտնաբերել ու դուրս կորզել առարկաների, երևույթների մեջ եղած իրողությունները, ընկալումները, լուծել առաջադրված խնդիրները, հաղթահարել դժվարությունները, որն իր հերթին սովորական զվարճալի խաղ լինելուց բացի՝ պահանջում է մտավոր ու ֆիզիկական որոշակի ունակություններ և գիտելիքներ:

Հանելուկների գլխավոր նպատակը ուսուցողական է. դրանք միտված են պահպանելու և տարածելու ազգային բանահյուսական մշակույթը, որպեսզի ժողովուրդը ազատ և ուրախ ժամերին՝ խնջույքներին, հարսանիքներին ոչ թե ժամանակ վատնի օտար, վնասակար գրույցների վրա, այլ զբաղվի այդ կարճ հանելուկներով, որոնց հիմքում բարոյակրթական ու հայրենասիրական նպատակներն են:

Հայ հանելուկագրության ամենից ակնառու դեմքը՝ Ներսես Շնորհալին, իսկապես այդ նպատակով է ստեղծել հանելուկներ՝ «Առակք վասն ուրախութեան մարդկան»: «Առակ» բառը, ինչպես նշում է ակադեմիկոս Մանուկ

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Մնացականյան Ա. Շ.**, նշվ. աշխ., էջ 7-8:

<sup>2</sup> Հայերեն բացատրական բառարան, կազմեց Սոս. Մալխասեանց, հ. առաջին, Ա-Ե, Երևան, 1944, էջ 227:

<sup>3</sup> **Հարությունյան Ա.**, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), էջ 8-9:

Աբեղյանը, «չպիտի հասկանալ արդի իմաստով, այլ իբրև հանելուկներ»<sup>1</sup>: Հանելուկների նյութը նա վերցրել է հայ բանահյուսության հարուստ գանձարանից: «Հայ միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ որպես գրական նոր տեսակ Շնորհալու ձեռքով են մուտք գործել մեր գրավոր հանելուկները»<sup>2</sup>,– գրում է Գր. Հակոբյանը:

Հանելուկները շատ տարածված և սիրված են եղել միջնադարյան Հայաստանում, սակայն չեն պահպանվել, քանի որ մեր միջնադարյան գրիչները դրանք համարել են «թեթև գործեր» (պատահական չէ վերևում նշված «նսեմաբանություն» անվանումը) և չեն ընդօրինակել: Աշոտ Աբրահամյանը պնդում է, որ «միջնադարյան մեր հարուստ մատենագրությունը շատ աղքատ է հանելուկներով»<sup>3</sup>, թեև նկատում է, որ առանձին ձեռագրերում՝ «զլխավորապես գրական, գիտական բովանդակություն ունեցող ժողովածուներում, պատահում են չուսումնասիրված հանելուկներ՝ մեծ մասամբ անհեղինակ»<sup>4</sup>, որոնք, անշուշտ, ունեն գրական արժեք, և որոնց քննությունը նոր էջ պետք է բացի հայ միջնադարյան հանելուկագրության ուսումնասիրության համար: Նրա այս պնդման լավագույն ապացույցը, թերևս, Ստեփանու Դաշտեցու ձեռագրերում հայտնաբերված հանելուկներն են:

### **Ստեփանու Դաշտեցու հանելուկների բովանդակային և պատկերային առանձնահատկությունները**

Ներսես Շնորհալուց հետո հայ հեղինակները երբեմն դիմել են հանելուկի ժանրին, բայց ընդհանուր առմամբ այն բավականին մոռացված է եղել: Ուշ միջնադարի հայ գրականության մեջ Ստեփանու Դաշտեցու հանելուկները ուշագրավ են նրանով, որ հենց նա է երկարատև ընդմիջումից հետո շարունակել դասական հանելուկագրության ավանդույթը:

Ստեփանու Բասիլիոս Շիրուփալանկյանի անունով մեզ հայտնի է 1700 թ. գրված «Համառօտ ընձեռումն վիճարանութեան. Ընդդեմ հերձեռածողաց ազգին հայոց» գործը, որը բաղկացած է երեք՝ «Մաղախ փշրանաց», «Կոչնակ ճշմարտութեան», «Խնդիր ուղղութեան», գրքերից: Մատենադարանի ընդօրինակություններում հայտնի է Ստեփանու Դաշտեցու «Համառօտ պատմութիւն և անունք որդոց թագաւորաց Օսմանցոց» երկը, որին կցված են «Հնդկաց պատմութիւնը», «[Ստեփանոսի] Ոսիւ շարադրեալ անունք թագաւորացն Օսմանցոց», «Ունաշարութիւն գեղջուկ ի վերայ Ջուղայեցոյ» և «Ծիծաղելոյ վարսաղ Ստեփաննոսի Դաշտեցոյ» գործերը: Դրանք ընդօրինակված են Մատենադարանի թիվ 1786 ձեռագրում, որտեղ և գտնվում են Ստե-

<sup>1</sup> Աբեղյան Ա., Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1946, էջ 94:

<sup>2</sup> Հակոբյան Գր., Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 220:

<sup>3</sup> Աբրահամյան Ա., Ստեփանու Դաշտեցու հանելուկները // «Էջմիածին», 1947, թիվ 4, էջ 46:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

փանոս Դաշտեցու հանելուկները<sup>1</sup>:

Հասկանչական է, որ ժողովրդական բանավոր ստեղծագործությունից գրավոր դպրություն փոխ առած այդ ժանրի մեջ Ստեփանոս Դաշտեցին չէր դավ սուկ կրկնօրինակող, այլ ավելացրեց նոր երանգներ ու գծեր. նա Ներսես Ծնորհալու նույնահանգը փոխարինեց աշուղական երգերի հանգավորմամբ: Նրա հանելուկները, Ներսես Ծնորհալու հանելուկների համեմատությամբ, բովանդակությամբ ավելի աշխարհիկ են ու սրամիտ: Հետաքրքիր է նաև այն, որ Ստեփանոս Դաշտեցու որոշ հանելուկներ պատմում են նոր ժամանակներին բնորոշ նոր իրերի ու երևույթների մասին: Սակայն նա պահպանում է և կարևորում ժանրի ուսուցողական հատկանիշը:

Ա. Աբրահամյանի բնութագրմամբ՝ «իր ժամանակի աչքաբաց, լեզուներ գիտցող և բավականաչափ զարգացած այդ անձնավորությունը» չէր կարող անտարբեր լինել հայ հասարակության կրթության հանդեպ: «Նորահայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի» աշխատության հեղինակ Սիմոն Սիմոնյանը, հայերեն և իտալերեն սկզբնաղբյուրները հղումներ անելով, մանրամասն տեղեկություն է հաղորդում Ստեփանոս Դաշտեցու կրթության մասին. նա նախնական կրթությունը ստացել է Նոր Ջուղայում, իսկ ուսումը շարունակելու համար ուղևորվել Իտալիա. «Հռոմի կաթոլիկ մեկ հաստատության, հավանորեն, «Ուրբանյան» վարժարանի մեջ, ուրեմն ստացած ըլլալու է ժամանակին բարձրագույն կրթությունը»<sup>3</sup>:

«Բուրժուականացող խավերի յուրաքանչյուր առաջադեմ ներկայացուցչի նման, – գրում է Հ. Սահակյանը, – Ստեփանոս Դաշտեցին ևս շատ է մտահոգվել հայ ազգի լուսավորության, մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության հարցով»<sup>4</sup>: Հենց այս նպատակներով են հորինված նրա քառյակատիպ հանելուկները, որոնց թվում աչքի է ընկնում մի հանելուկ, որտեղ ընդգծվում է նրա՝ մատենագրությունը և կրթությունը կարևորող մտածողությունը.

Ընդ կայսերաց և ստրկաց իօսիմ անյագ,  
Քարոզատու և ուսուցիչ եմ յոյժ արագ,  
Շրթանց իմոց բխեն իմաստք, գոր միշտ բանամ,  
Բայց գոր ասեմն և քարոզեմն ոչ հասկանամ<sup>5</sup>:

**Գրքի երես (էջ 48)**

---

<sup>1</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 47:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 47:

<sup>3</sup> **Սիմոնեան Ս.**, Նորահայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Դաշտեցի, Պէյրուօ, 1981, էջ 15:

<sup>4</sup> **Սահակյան Հ.**, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16-17-րդ դարեր), Երևան, 1975, էջ 92:

<sup>5</sup> Հանելուկները փոխվերցված են Ա. Աբրահամյանի վերոհիշյալ հոդվածում արված ընդօրինակությունից: Մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում:

Ստեփանոս Դաշտեցուց պահպանված հանելուկների շարքը բաղկացած է թվով քսան քառյակից և կրում է «Հանելուկ արարեալ ումեմնէ Ստեփաննուէ Դաշտեցույ» վերնագիրը, որը բացվում է «Արևի» մասին հանելուկով.

Թէպէտ շարժիմ և տամ շարժել, բայց ոչ ըզգամ,  
Տամ համայնից ցոյցք որակաց և ինչ որ տամ,  
Երևիմ և ոչ երևիմ փոփոխապէս,  
Յերթեկեացն օր ըստ օրէ առնում զհանդէս:

**Արև (էջ 48)**

Բնության երևույթներին են վերաբերում Ստեփանոս Դաշտեցու՝ մեղվի, շերամի որթի, կայծքարի, ոջիլի մասին հանելուկները: Դրանք մարդուն շրջապատող երևույթներն ու իրերը բացահայտող բովանդակություն ունեն: Ահա, օրինակ, բնության այդպիսի երևույթներին վերաբերող հանելուկներից մեկը.

Հանգոյն սերմանց եմ անկենդան նաև անշունչ,  
Որքան կամիս մեռյալ մնամ միշտ անմռունչ  
Ի մեռելոց կենդանանամ և անյագուրտ եմ,  
Յաւելորդացն իմ հանդերձ փառաց կուտեմ:

**Շերամի սերմ (էջ 49)**

Առհասարակ նրա հանելուկներում չկա մեկը, որ չհետապնդի որոշակի ճանաչողական նպատակ: Նա հանելուկների միջոցով ուշադրություն է հրավիրում հայերի կենցաղում նոր գործածության մեջ մտած առարկաների ու իրերի վրա. այդ առարկաներից է, օրինակ, կայծքարը.

Հարիւր ամօք թէև մնամ ի մէջ ջրոյ,  
Երբ թօթափեմ՝ զկայծակունս թափեմ հրոյ,  
Ի զաւակացն իմոյ փախչին մէզ և խաւար,  
Ինև ուտեն ազինք համայն զոսպ ու ձաւար:

**Կածաքար (էջ 50)**

Ստեփանոս Դաշտեցու հանելուկներից մի քանիսը բնութագրում են կենցաղային իրեր՝ մկրատ, ասեղ, հայելի, մոմ և այլն, որոնցով նա ցանկացել է իր ընթերցողներին որոշ տեղեկություններ հաղորդել առօրյա կենցաղում տեղ գտած մի շարք իրերի և դրանց օգտագործման մասին:

Իբրև զքարինս եմ անկենդան և ոչ քայլեմ,  
Պայծառութեամբ իբր արեգակն կու փայլեմ,  
Եմ նկարիչ ճարտարագոյն յոյժ անվրէպ,  
Զոր ցուցանենն՝ կրեմ ի յիս, լինիլն հանդէպ:

**Հայելի (էջ 50)**

Նրա հանելուկների շարքում առանձնանում են ժամանակի գիտության նորություններին (ժամացույց, կողմնացույց, հրացան, նավակ) առնչվող հանելուկները:

Թռչիմ իբրև զարագ թռչուն, բայց ոչ ուտեմ,  
Ի յանասնոց շնչատրաց մերկ, և չուտեմ,  
Ամբարձ ոտիք, պարզեայ անձամբ, շեշտ ընթանամ,  
Բայց թե ըզշունչ ոչ առնուցում՝ անշարժ մնամ:

**Նավակ (էջ 48)**

Բնութագրվող առարկաների մեջ վաճառականների կյանքի հետ առնչություն ունեցող առարկաների կողքին աչքի են ընկնում նաև մետաքսագործության հետ կապ ունեցող երևույթները, ինչպես օրինակ՝ որդան կարմիրն ու շերամը:

Իրենց ժամանակաշրջանի զարգացող աշխարհի հետ կապ ունեին վաճառականները: Նրանք, ճամփորդելով երկրեերկիր, ծանոթանում էին գիտական աշխարհի նորություններին, որոնցից հաճախ օգտվում էին երկար ճանապարհորդությունների ընթացքում, ուստի կարող էին գնահատել մարդկային նոր գյուտերի կարևորությունը զարգացող կյանքի համար:

Այդպիսի օրինակներ են ժամացույցի ու կողմնացույցի մասին հանելուկները.

Ի յաստեղաց յերկուց պահեմ զգիծն իմ անշարժ,  
Զի նաւապետք առ ի նաւել ես տամ զվարժ,  
Որքան մանրին այնքան երկուս ունիմ զծայր,  
Ի հիւսիսոյ ւ ի հարաւոյ առնիմ զդադար:

**Կողմնացույց (էջ 50)**

Կամ՝

Յանզգայէ միոյ շարժիմ առհասարակ,  
Պարտք ատամանցս՝ որք են բազում և յոյժ բարակ,  
Չունիմ զձեռս և եմ անշունչ, և ոչ տեսանեմ,  
Բայց զըրջանս ժամանակաց ձեզ ցուցանեմ:

**Ժամացույց (էջ 48)**

Ստեփանոս Դաշտեցու հանելուկներում երբեմն գործածված պատկերներն ու համեմատությունները հաճախ շատ են առարկայական ու հասարակ, ինչ-որ չափով նաև՝ կոպիտ երևույթ, որը բացառվում է Ներսես Շնորհալու պարագայում: Դրանցում առկա են կենցաղային որոշ արտահայտություններ, որոնք գեղագիտության տեսանկյունից կարող են տհաճ տպավորություն թողնել, սակայն նրա հիմնական ընթերցողներին՝ իրական հարաբերությունների մեջ մխրճված առևտրականներին, թերևս ոչ տհաճ, ոչ էլ տարօրինակ են թվացել: Ի վերջո, Ստեփանոս Դաշտեցին ժամանակի հայ վաճառականության ներկայացուցիչն էր, և լեզվական այս դրսևորումները

արտացոլանքն են կենցաղի և միջավայրի:

Ջերթ գպոռնիկ կին մի եմ ես համաքատակ,  
Հանդէպ միմեանց երկու և լայն ունիմ գօղ  
Երբ յօղն իմ դնեն զմատ իսկույն խաղամ  
Ծամելօքս իմ, վուշ և զկտաւս հատեալ աղամ:

### Մկրատ (էջ 49)

Ահա մի մասը Ստեփանոս Դաշտեցու փոքրաքանակ հանելուկներից, որոնք հստակ պատկերացում են տալիս դրանց բովանդակության և լեզվառճական առանձնահատկությունների մասին: Բերված օրինակները բավական են նկատելու, որ նրա հանելուկները բանաստեղծականությամբ և գեղարվեստական ոճով զիջում են Ներսես Շնորհալու հանելուկներին, որոնք Մանուկ Աբեղյանն անվանում է «փոքրիկ բանաստեղծություններ՝ լի ճշգրիտ իրականությամբ»<sup>1</sup>: Գրքի՝ որպես ժամանակի գրագիտության և իմաստասիրության խորհրդանիշի թեմային անդրադարձել է նաև Ներսես Շնորհալին, որտեղ բանաստեղծական, երգեցիկ քառատողով նկարագրել է այն՝ շունչ ու կենդանություն հաղորդելով դրան.

Տուն է սպիտակ, լայնատարած,  
Սև հավիկներ մեջը թառած,  
Խոսում են ու զրույց անում՝  
Մարդու նման լեզու առած<sup>2</sup>:

### Գիրք

Նույն գրքի դերի ու կարևորության մասին է գրում նաև Ստեփանոս Դաշտեցին իր «Գրքի երես» հանելուկում (տե՛ս վերը). մինչ Ներսես Շնորհալին բանաստեղծական պատկերներով ու համեմատություններով է անձնավորում առարկան, Ստեփանոս Դաշտեցին անում է ամփոփ բնութագրություն՝ ներկայացնելով առարկայի առանձնահատկությունները. նրա պատկերած գիրքն առնչվում է և՛ կայսրերին, և՛ ստրուկներին, քարոզատու է, ուսուցիչ, իմաստություններ է պարունակում և այլն:

Ներսես Շնորհալու և Ստեփանոս Դաշտեցու հանելուկների համեմատական բնութագիրն այսպես է ներկայացնում Հ. Սահակյանը. «Շնորհալին հանելուկի առարկան ներկայացնում է հիմնականում բանաստեղծական պատկերների միջոցով, մինչդեռ Դաշտեցու հանելուկները ավելի շատ երևույթի կամ առարկայի կարևոր հատկանիշների հասկանալի ու պարզ ամփոփումներն են, մեծ մասամբ՝ նկարագրական, թեև ինչ-որ չափով նաև իմաստասիրական»<sup>3</sup>: Այս դիտարկման համար ակնհայտ օրինակներ են

<sup>1</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 94:

<sup>2</sup> Ներսես Շնորհալի, Հանելուկներ, Երևան, 1984, էջ 12:

<sup>3</sup> Սահակյան Հ., նշվ. աշխ., էջ 92:

Ստեփանոս Դաշտեցու՝ մեղվի և Ներսես Շնորհալու՝ կրիայի մասին հանելուկները, որտեղ խտացված գույներով երևում են առաջինի իմաստասիրական, ուսուցողական, երկրորդի՝ գեղարվեստական միտումները.

Փոքր և չնչին եմ կենդանեաց, և եմ նրաատ,  
Բուսականաց զհոտոտելն եմ յոյժ զգաստ,  
Կերակուր մի չէանց բնաւ ի կոկորդ իմ,  
Բայց թագաւորք ցանկան ուտել զաւելորդն իմ:

**Մեղու (Էջ 49)**

Չորս ոտք ունի, բայց շուն չի,  
Ջու է ածում, թռչուն չի,  
Խոտ է ուտում կովի պես,  
Պատյան ունի, բայց տուն չի<sup>1</sup>:

**Կրիա**

Առարկայական-նկարագրական բնույթ են կրում նաև ժողովրդական հանելուկները, որոնց նպատակը, ըստ ավանդական տեսության, գլխավորապես ժամանցային է, քան ուսուցողական, իմաստասիրական:

Մեյ ծառ մը կա Հնդա քաղաք,  
Ծամեր ձգե քաղքե-քաղաք,  
Ամեն ծամին ջուխտ մե ճրագ<sup>2</sup>:

**Արեգակ (Վան), (Էջ 4)**

Էն ի՛նչն ա ինչ.  
Առաջ չորս ոտով ա ման գալի,  
Հետո երկու, վերջը՝ իրեք:

**Մարդ (Նոր Նախիջևան), (Էջ 85)**

Էրգեն չվան,  
Թեխ (դեպի) Նախչվան:

**Մրջյուն (Մավմաստ), (Էջ 81)**

Ժողովրդական հանելուկները, ի տարբերություն առակների և առածների, արտահայտում են ոչ թե ընդհանուր բնույթի որևէ գաղափար, այլ՝ կոնկրետ որևէ առարկա կամ երևույթ և ունեն աշխարհաճանաչողական արժեք: Ավանդականի օրինաչափություններին են հետևում նաև Նոր Ջուղայի հեղինակների հանելուկները, որոնք հիմանկանում հարց-հանելուկներ են և ունեն մշակված որոշակի ձև:

---

<sup>1</sup> Ներսես Շնորհալի, նշվ. աշխ., էջ 11:

<sup>2</sup> Ժողովրդական հանելուկների օրինակները բերված են Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» գրքից: Հաջորդ մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում:



Մին գաղ (բան) ունեմ, մին գաղ ա,  
Ճարմակ կարաս,  
Միջին՝ կարաք, էն ի՛նչն ա:

**Մրջյուն (Նոր Ջուղա), (էջ 74)**

Մին գաղ ունեմ, մին գաղ ա.  
Բանցըր դանդանա (դարակ տնային սպասեղենի)  
Սն սատանա, էն ի՛նչն ա:

**Միծեռնակ (Նոր Ջուղա), (էջ 76)**

Մին գաղ ունեմ, մին գաղ ա.  
Թեփռով (փետուր) կը ցանեն.  
Աչքով կը քաղեն,  
Խելքով (գլխով) կուտեն,  
Մտքով կը մարսեն.  
Էն ի՛նչն ա:

**Թուղթ և գիր (Նոր Ջուղա, Ախալցխա, Նախիջևան), (էջ 179)**

Թե՛ Ներսես Շնորհալին և թե՛ Ստեփանոս Դաշտեցին զգալիորեն հեռացել են ժողովրդական հանելուների սկզբնաղբյուրից, որտեղ հանելուկները չեն արտահայտել որևէ գաղափար, ունեցել են միայն գործնական կիրառություն և կենցաղավարել են իբրև մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ<sup>1</sup>:

Ստեփանոս Դաշտեցին երկար ընդմիջումից հետո շարունակեց դասական հանելուկագրության ավանդները, դարձավ Ներսես Շնորհալու գաղափարակից հետևորդը ու շրջանադարձ: Նա իր «Հանելուկ արարեալ ումեմնէ Ստեփաննոսէ Դաշտեցոյ» շարքը ծառայեցրեց իր ժամանակի մարդու կրթության ու դաստիարակության գործին՝ թողնելով իր ժամանակի ու միջավայրի կնիքը հայ հանելուկագրության պատմության մեջ:

### **Սոսև Բողոզյան – Ստեփանոս Դաշտեցու հանելուկները**

Ստեփանոս Դաշտեցու բազմաժանր ստեղծագործության մեջ հանելուկները աննշան մաս են կազմում, այնուամենայնիվ դրանց ուսումնասիրությունը կարևոր է հայ հանելուկագրության պատմության համատեքստում: Գրականության պատմության մեջ Ներսես Շնորհալուց հետո Ստեփանոս Դաշտեցին էր, որ շարունակեց արդեն բավական ժամանակ մոռացության մատնված հանելուկագրության դասական ավանդները, ընդ որում՝ ոչ թե սոսկ կրկնօրինակելով, այլ որոշակի նոր ձև ու բովանդակություն հաղորդելով հանելուկի ժանրին: Թեմատիկ առումով Ստեփանոս Դաշտեցու հանելուկները հիմնականում աշխարհիկ բնույթ ունեն և ուսուցողական արժեք են, նկարագրում են բնության երևույթներ, կենցաղային և ժամանակի համար

---

<sup>1</sup> Տե՛ս **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ Ը:

գիտական նորություն համարվող տեխնիկական իրեր, որոնք նա ներկայացնում է առարկայորեն՝ հասկանալի ու պարզ ամփոփումներ անելով: Այս առարկայական հատկանիշները վերաբերում են նաև Ստեփանոս Դաշտեցու հանելուկների լեզվա-նճական կողմին, որը որքան կոպիտ կարող է թվալ գեղագիտության տեսանկյունից, նույնքան սովորական է և համապատասխան իր ժամանակի հիմնական ընթերցողների՝ Նոր Ջուլայի վաճառականների համար:

### **Сосе Богозян – Загадки Степаноса Даштеци**

*Ключевые слова – Степанос Даштеци, Нерсеса Шнорали, Новая Джуга, произведения, классический жанр, светский характер, технические предметы, языковая стилистика*

Изучение темы привело к следующим заключениям. В разножанровых произведениях Степаноса Даштеци, автора XVII века из Новой Джуги, загадки занимают незначительное место, однако их изучение важно в историческом контексте создания армянских загадок. После Нерсеса Шнорали в истории армянской литературы Степанос Даштеци продолжил давно забытый классический жанр написания загадок, причем не только дублируя Нерсеса Шнорали, но и придавая новый вид и содержание жанру загадок. По сути, загадки Степаноса Даштеци носят в основном светский характер, имеют обучающую ценность, описывают явления природы, технические предметы, которые являются научной новизной своего времени и которые он содержательно описывает посредством понятных и простых заключений. Эти существенные особенности также относятся к языковой стилистике загадок Степаноса Даштеци, которая, хотя и может показаться грубой с эстетической точки зрения, однако столь же распространенной и соответствующей интересам своих основных читателей – купцов из Новой Джуги.

### **Sose Boghonian – Stephanos Dashtents's Riddles**

*Key Words – Stepanos Dashtents, Nerses Shnorhali, riddle, medieval pamphlet, Folk-folklore riddles, personal-written riddles, secular riddles, educational riddles, merchants of New Julfa*

The topic under discussion led to the following conclusions. Riddles hold an insignificant part among the multifaceted works of 17<sup>th</sup>-18<sup>th</sup>-century author from New Julfa Stepanos Dashtents; however, their study is important in Armenian pamphlet context. In literature, after Nerses Shnorhali, Stepanos Dashtents was the one who continued the classic traditions of oblivious pamphlets, not just duplicating, but also transmitting new form and content to the genre. Thematically Stepanos Dashtents's riddles bear secular character, they have educational value, they describe the phenomena of nature, household and technical scientific novelties, which the author presented objectively, with clear and simple summaries. These subjective features also refer to Stepanos Dashtents's linguistic aspect, which might be considered impolite from aesthetic point of view, but are common and relevant to the readers of his time - the merchants of New Julfa.

**Սոսե Բոգոզյան** – ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ (sosse.bogozian@gmail.com)

Ներկայացվել է 03.10.2021

Գրախոսվել է 01.10. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021